ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Տեղեկատվության հեղինակ
պատմական գիտությունների դոկտոր
Լ.Ա. Բարսեղյան

Ա 86320

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

Երևան 1999

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Մատենաշար Թիվ 1

Խմբագիր՝ Ս. Կ. Պողոսյան

Մատենաշարի նպատակն է Հայոց ցեղասպանության թանգարանի այցելուներին ծանոթացնել 20-րդ դարի առաջին ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստների մասին.

1967-ին ծիծեռնակաբերդում բարձրացավ Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանը:

Այն դարձավ ուխտատեղի՝ ազգային ոգու խոռվքի ու լուռ պայքարի արտահայտության մի վայր:

1995-ին հուշահամալիրը համալրվեց թանգարանային շենքով: Այն դարձավ մոռացության դեմ, հանուն հիշողության պահպանման պայքարի կարևոր օջախ:

Թանգարանի այցելուն միատարր չէ: Դպրոցականներից սկսած մինչև զառամյալ ծերունիները իրենց սրբազան պարտքն են համարում հարգանքի տուրք մատուցել նահատակներին:

Այցելուների մեջ քիչ չեն նաև այլազգիները:

Շատերին հետաքրքրում է ճշգրիտ տեղեկատվություն ստանալ իրագործված ցեղասպանության չափերի ու դրա հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստների մասին:

Այդ նպատակն է հետապնդում նաև Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրությունը,որը այցելուներին է ներկայացնում Մեծ եղեռնի նախօրյակին՝ 1914թ. դրությամբ Օսմանյան Թուրքիայում հայ ազգաբնակչության թվակազմը, հայկական բնակավայրերի, գործող հայկական եկեղեցիների և գործող հայկական դպրոցների թիվը:

Հաշվի առնելով այցելուների ցանկությունը, մենք ձեռնարկում ենք մի նոր մատենաշարի հրատարակության գործը, որը հիմնականում նպատակ է հետապնդում լայն շրջանառության մեջ դնել հրապարակի վրա եղած տվյալները ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցրած մարդկային ու նյութական վնասների մասին:

Ստորև ներկայացնում ենք 1914թ. դրությամբ Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ բնակվող և նրանց բնօրրանը համարվող Արևմտյան Հայաստանի հայ բնակչության մասին տվյալները:

	Նահանգների անվանումը և հայերի բնակության վայրերը	Հայկական բնակավայրերի թիվը	Հայ բնակչության թիվը	Հայկական եկեղեցիների թիվը	Հայկական դպրոցների թիվը
1	2	3	4	5	6

1	2	3	4	5	6
1	Էրզրումի նահանգ	425	215000	482	322
2	Վանի նահանգ	450	197000	537	192
3	Դիարբեքիրի նահանգ	249	124000	158	122
4	Սվազի նահանգ	241	225000	219	204
5	Խարբերդի նահանգ	279	204000	307	204
6	Բիթլիսի նահանգ	681	220000	671	207
7	Տրապիզոնի նահանգ	118	73390	109	190
8	Արևմտյան Անատոլիա	237	371800	281	300
9	Կիլիկիա և Հյուսիսային Սիրիա	187	309000	537	176
10	Եվրոպական Թուրքիա	58	194000	67	79
	Ընդամենը	2925	2133190	3368	1996

Այցելուն լսել է մեկ և կես միլիոն հայերի ոչնչացման մասին և նրան հետաքրքրում է, նաև թե որտե՞ղ և որքա՞ն հայ զոհ դարձավ 20-րդ դարի առաջին ցեղասպանությանը:

Թանգարանային ցուցադրությունը դիտելիս նա իր համար պարզում է՝

	Նահանգների անվանումը	Բնակչության թիվը 1914թ.	Բնակչության թիվը 1922թ.	Տեղահանվել կամ ոչնչացվել են
1	2	3	4	5
1	Էրզրում	215000	1500	213500
2	Վան	197000	500	196500
3	Խարբերդ	204000	35000	169000
4	Դիարբեքիր	124000	3000	121000
5	Բիթլիս	220000	56000	164000
6	Սվազ	225000	16800	208200
7	Տրապիզոն	73390	15000	58390
8	Արևմտյան Անատոլիա	371800	27000	344800
9	Կիլիկիա և Հյուսիսային Սիրիա	309000	70000	239000
10	Եվրոպական Թուրքիա	194000	163000	31000

1	2	3	4	5
	Ընդամենը	2133190	387800	1745390

Ցեղասպանության հետևանքով մարդկային զգալի կորուստների կողքին մեծ են նաև հայ ժողովրդի կրած նյութական վնասները Արևմտյան Հայաստանում և Հայաստանի Առաջին հանրապետության տարածքում:

Հայ ժողովրդի կրած նյութական վնասների մոտավոր հաշվեկշիռը կազմվել է Հայ Ազգային պատվիրակության (նախագահ Պողոս Նուբար) և Հայաստանի Հանրապետության պատվիրակության (նախագահ Ա. Ահարոնյան) կողմից և համատեղ ստորագրությամբ որպես հուշագիր ներկայացվել է 1919թ. Փարիզում հրավիրված Խաղաղության Վեհաժողովին:

Հաշվեկշիռը կազմված է յուրաքանչյուր հայ ընտանիքին հասցված վնասի հաշվարկով, մինչպատերազմյան կամ հին գների միջին արժեքի և 1919թ. գործող գների միջին արժեքի չափով, ֆրանսիական դրամանիշի՝ ֆրանկի արտահայտությամբ:

Պատվիրակությունների կողմից ներկայացված հաշվեկշիռը բաղկացած է երկու մասից և հիմնականում նպատակ էր հետապնդում հատկացումների և հատուցումների պայմանով վերականգնել հայ ժողովրդի կրած նյութական վնասները[1]:

Հաշվեկշռի առաջին բաժինը վերաբերում է Արևմտյան Հայաստանի տարածքում բնակվող հայ ազգաբնակչության վնասների հաշվարկներին:

Պատվիրակությունները ներկայացված հաշվեկշռի բնագրի առաջին՝ Արևմտյան Հայաստանին վերաբերվող մասում անհրաժեշտ են համարել նախապես նշել երեք կարևոր հանգամանքներ:

Առաջին: Համաշխարհային պատերազմի ընթացքում որևէ մեկ այլ վայրում չցուցաբերվեցին հրդեհելու, ավերելու, կողոպտելու այնքան մոլեգին արարքներ, որոնք տեղի ունեցան Հայաստանում, որտեղ հետևողականորեն գործադրվեցին բնակչության բնաջնջման պաշտոնական գործողությունները:

---

[1] 1915-1965. Յուշամատեան Մեծ եղեռնի. Պէյրութ, 1965, էջ 1020-1022, էջ 1025-1028:

Երկրորդ: Մեկ այլ վայրում պաշտոնապես եթե բնակչության մեկ մասին թույլտվություն և ամբողջական ազատություն չտրվեց մյուս մասին ոչնչացնելու և կողոպտելու համար, ապա Հայաստանում թուրքական կառավարությունը թուրքերին և քրդերին ազատ գործելու թույլատվություն և հնարավորություն տվեց:
Երրորդ: Վերջապես ավերածությունների ենթարկված և ոչ մի երկիր ու տարածք այնպիսի դժվարությունների առաջ չկանգնեց, ինչպիսինը Հայաստանն էր, որն իր աշխարհագրական դիրքի, հաղորդակցության միջոցների պակասության և ամբողջովին կործանված ու ավերակների վերացվելու պատճառով չէր կարող իրականացնել վերաշինության, վերանորոգման ու վերականգնման գործը:

Փարիզի վեհաժողովին ներկայացված հաշվեկշռի ներածական բաժնում առաջին անգամ փորձ է կատարվում պաշտոնապես տեղեկացնել պատերազմի մասնակից բոլոր պետություններին, թե պատերազմի չորս տարիներին ինչպիսի փոփոխություն է կրել Օսմանյան Թուրքիայի տարածքում բնակվող հայ ազգաբնակչության թվակազմը: Ըստ այդ տեղեկատվության 1914թ. Օսմանյան կայսրությունում հայերի ընդհանուր թիվը կազմում էր 2026000 մարդ:

Այդ ընդհանուր թվից առանձնացվում է Կոստանդնուպոլսից, Զմյուռնիայից և մի քանի այլ շրջաններից չտեղահանված 226000 հայերի թիվը, իսկ մնացյալ 1800000 հայերը ոչնչացան, տեղահանվեցին ու ապաստան գտան Եվրոպայում և Կովկասում, լքելով իրենց տները և գույքը:

Վիճակագրական հաշվարկների սկզբունքների կիրառմամբ 1800000 հայերը կազմում էին 360000 ընտանիքներ, որոնց մեկ քառորդը, կամ 90000 ընտանիքներ բնակվում էին քաղաքներում, իսկ մնացած 270000 ընտանիքները՝ գավառներում:

Ստորև ներկայացնում ենք հայ ժողովրդի կրած նյութական վնասների մոտավոր հաշվեկշռի գլխավոր հաշվարկները

1. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ (ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱ)

Ա. Գավառների բնակչության կրած վնասները (մեկ ընտանիքի հաշվարկով)	1914թ. գինը	1919թ. գինը
1	2	3

1	2	3
1.ԿԱԼՎԱԾՔՆԵՐ (տներ, ագարակներ, մթերանոցներ, ջրաղացներ, անտառներ, այգիներ, թթենիի տընկարաններ)	475	2850
2. ԿԱՀ-ԿԱՐԱՍԻ (կարասի, հագուստեղեն և գոհարեղեն, զույք)	600	3000
3. ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ (արոր, սայլ և կառք)	300	1500
4. ՄԵԿԱՄՅԱ ՀՈՒՆՁՔԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ (հաշվարկը կատարվել է Թուրքիայի Երեսփոխանական ժողովի 1911թ. տարեկան պաշտոնական հաղորդագրությունում տեղ գտած վիճակագրության համաձայն, ըստ որի հայկական վեց նահանգների բնակչության կողմից վճարված տուրքը՝ տասնորդը կազմել էր 992583 թուրքական ոսկի: Ըստ հաշվարկի յուրաքանչյուր հայ ընտանիքի մեկամյա հունձքի արժեքը կազմել է 1488 դահեկան կամ 338 ֆրանկ:)	338	338
5. ԱՐՁԱՌ Յուրաքանչյուր ընտանիքի համար հաշվարկվել է՝ ա. ՎԱՐՈՂ ԱՐՁԱՌ – 1,5 զույգ (մեկ զույգ եզը՝ 10 թրքական ոսկի (230 ֆրանկ) արժեքով)	375	3000
բ. ԱՅԼ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ (կով, հորթ, ձի)	187,5	1500
գ. ՈՉԽԱՐ ԵՎ ԱՅԾ (ըստ հաշվարկների յուրաքանչյուր ընտանիք հարկ է վճարել 14 ոչխար և այծ պահելու համար,որը կազմել է 55 դահեկան) :	280	1680

1	2	3
Մեկ ոչխարի կամ այծի գինը կազմել է 20 ֆրանկ:		
6. ՊԱՐԵՆ (հաշվարկվել է յուրաքանչյուր ընտանիքի վեց ամսվա սննդամթերքի և անասունների կերի արժեքը)	287,5	2875
7. ԴՐԱՄԱԳԼՈՒԽ (ծախսվող դրամագլուխը)	300	300
-ընդամենը մեկ ընտանիքի կրած վնասը -գավառներում ապրող 270000 ընտանիքների կրած վնասը		17043 4601610000
Բ. Քաղաքների բնակչության վնասները և վերականգման համար նրանց կարիքները (մեկ ընտանիքի հաշվարկով)		
8. ԿԱԼՎԱԾՔՆԵՐ (բնակարաններ, մենատներ, վաճառատներ, հյուրանոցներ, գործարաններ, արհեստանոցներ, խանութներ, ջրաղացներ, պարտեզներ, այգիներ և անտառներ):	1900	15200
9. ԿԱՀ-ԿԱՐԱՍԻ (կահույք, հագուստեղեն և գոհարեղեն, գույք)	1800	9000
10. ՊԱՐԵՆ (վեց ամսվա հաշվարկով)	575	5750
11. ԴՐԱՄԱԳԼՈՒԽ (առևտրականների, արվեստագետների և արհեստավորների արժեքդեր, ապրանքներ և հիմնադրամ)	6000	6000
-ընդամենը մեկ ընտանիքի կրած վնասը -քաղաքային բնակչության 90000 ընտանիքների կրած վնասը		35950 3235500000
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎՆԱՄՆԵՐ		

1	2	3
Գ. Մարդկային կորուստներ		
12. Հատուցումներ մեկ միլիոն ոչընչացված մարդկանց վերապրող ժառանգներին (իսկ սրանց բացակայության դեպքում՝ ազգին), յուրաքանչյուր մարդուն 5000 ֆրանկի չափով		5000000000
13. Հատուցումներ 50 հազար հաշմանդամներին, վիրավորներին և անբուժելի հաշմանդամներին, յուրաքանչյուրին 5000 ֆրանկի չափով		250000000
14. Հատուցումներ 346350 աքսորվածների ժառանգորդներին, յուրաքանչյուրին 1000 ֆրանկի չափով		346350000
15. Հատուցումներ աքսորից վերապրողներին, արտասահմանում ապաստանածներին, որոնք զրկվել են աշխատանքից և սեփականության իրավունքից, 800000 մարդու կամ 160000 ընտանիքի հաշվարկով, յուրաքանչյուր ընտանիքին 4000 ֆրանկի չափով		64000000
16. Հատուցումներ կաշառակերության և բռնագրավման հետևանքով կրած վնասների		200000000
17. Արտասահմանում ապաստան գտած գաղթականներին (հիվանդանոցների, որբանոցների և առողջապահական հաստատությունների պահպանության և մատակարարման համար)		200000000
18. Հատուցումներ ազգային և կրոնական հաստատությունների ամբողջական կամ մասնակի ավերում-		

1	2	3
ների համար, այդ թվում՝ - 83 առաջնորդարաններ - 1860 եկեղեցի և մատուռ - 229 վանքեր - 26 վարժարաններ և դպրեվանքեր - 1439 դպրոցներ - 42 որբանոցներ, իրենց գույքով, ինչպես նաև ձեռագիր մագաղաթներ և պատմագեղարվեստական հուշարձաններ և արժեքներ		75000000
19. Ջրանցքներ, աղբյուրներ, ջրհորներ և այլ կառույցներ		50000000
Ընդամենը		6761350000

Սիայն Արևմտյան Հայաստանում ըստ վերը նշված բաժինների հանրագումարի, հասցված նյութական վնասը և պահանջվող փոխհատուցման ընդհանուր գումարը մոտավոր հաշվարկների հիման վրա կազմում է 14 միլիարդ 598 միլիոն 460 հազար ֆրանսիական ֆրանկ:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԱՎԱՌՆԵՐ

Ա. Ամբողջովին ավերված և քանդված շրջաններ, որոնց բնակչությունը տեղահանվել է:

Տեղահանվել են 1218000 ընտանիքներ,որոնցից՝

ա) 97440-ը զբաղվել են հողամշակությամբ

բ) 24360-ը՝ առևտրով, շինարարական և զանազան արհեստներով

1. 97440 ընտանիքներից յուրաքանչյուրին գործող (1919թ.) գների հիման վրա նոր բնակարանային շինարարության և տնտեսության վերականգնման համար անհրաժեշտ է՝

ա. ԿԱԼՎԱԾՔՆԵՐ (տուն,մառան, ախոռ, ջրաղաց, պարտեզ,այգի,անտառ և այլազան ծառերի տնկարան)	3000
բ. ԿԱՀ-ԿԱՐԱՍԻՆԵՐ (կահույք, գույք, հագուստեղեն)	1600
գ. ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ (արոր, մանգաղ,՝սայլ)	1200
դ. ԱՐՋԱՌ (մսացու կենդանիներ,կով, ձի, ջորի, ոչխար և այծ)	4500
ե. ԴՐԱՄԱԳԼՈՒԽ՝ տնտեսության կազմակերպման համար	3250
Ընդամենը	13550

Այսպիսով 97440 ընտանիքների համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է 1 միլիարդ 320 միլիոն 312 հազար ֆրանկ:

2. Մյուս 24360 ընտանիքներից յուրաքանչյուրին անհրաժեշտ են՝

ա. կալվածքներ - 10000
բ. կահ-կարասիներ - 5000
գ. դրամագլուխ - 6000

Ընդամենը մեկ ընտանիքի համար նախատեսվում է 21000 ֆրանկ, իսկ 24360 ընտանիքների համար՝ 511 միլիոն 560 հազար ֆրանկ:

Այսպիսով 121800 ընտանիքների համար պահանջվում էր մեկ միլիարդ 831 միլիոն 872 հազար ֆրանկ:

Բ. Բնակչության կողմից չլքված շրջաններ, որոնք սակայն պատերազմական գործողությունների, բռնագրավումների և աշխատավոր բնակչությա՞ն նվազեցման հետևանքով տուժել են

Այդ շրջաններում նյութական վնասներ են կրել 154 հազար ընտանիքներ, որոնցից 123200-ը զբաղվում էին երկրագործությամբ, իսկ 30800-ը՝ առևտրով, արդյունագործությամբ և արհեստներով:

1. 123200 ընտանիքներից յուրաքանչյուրին անհրաժեշտ է իր ընտանիքի տնտեսությունը վերականգնելու համար գնել՝

ա. մսացու և ընտանի կենդանիներ	-	3000
բ. երկրագործական գործիքներ	-	800
գ. վերանորոգել շինությունները և ստեղծել դրամագլուխ	-	4200

Յուրաքանչյուր ընտանիքի համար նախատեսված էր 8000 ֆրանկ,իսկ 123200 ընտանիքների համար՝ ընդամենը 985 միլիոն 600 հազար ֆրանկ:

2. Մյուս 30800 ընտանիքներից յուրաքանչյուրի տների, աշխատատեղերի,մթերանոցների և այլ ձեռնարկությունների վերանորոգման, արհեստագործական, արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունների վերակազմակերպման համար պահանջվում է 10 հազար ֆրանկ, իսկ բոլորի համար՝ 308 միլիոն ֆրանկ:

154 հազար ընտանիքների վնասները հատուցելու և տնտեսությունների վերականգման համար ընդամենը պահանջվում է մեկ միլիարդ 293 միլիոն 600 հազար ֆրանկ:

Գ. Ընդհանուր կորուստներ

1. Ռազմաճակատներում զոհված զինվորների և սպաների մոտավորապես 35 հազար ընտանիքներին, որբերին և ժառանգորդներին որպես հատուցում և հատկացում նախատեսվում էր 175 միլիոն ֆրանկ, յուրաքանչյուր ընտանիքին 5000 ֆրանկ հատկացնելու հաշվով:

2. 90 հազար հաշմանդամ և վիրավոր սպաներին ու զինվորներին որպես հատուցում և հատկացում նախատեսվում էր 450 միլիոն ֆրանկ, յուրաքանչյուր անձին 5000 ֆրանկ հատկացնելու հաշվով:

3. Զոհված կամ սովի և տարագրության հետևանքներով մահացած 100 հազար անձերի ընտանիքներին հատուցում՝ 500 միլիոն ֆրանկի չափով,յուրաքանչյուր անձին 500 ֆրանկի հաշվով:

4. Բռնաբարված 12 հազար անձերի հատուցում 12 միլիոն ֆրանկի չափով, յուրաքանչյուրի ընտանիքին 1000 ֆրանկ հատկացնելու հաշվով:

5. Հատուցումներ աքսորվածներին և գաղթականներին աշխատանքի և սեփականության իրավունքից զրկվելու համար, ընդամենը 35 հազար ընտանիքների 140 միլիոն ֆրանկի չափով, յու-

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0067330

350 gr.
A II
86320